ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 54

ք. Երևան 26.05.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-1/1» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Պլանետ Ֆայբեր» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 00216009, գործունեության հասցե՝ ՀՀ ք.Երևան, Հ. Հակոբյան 3 (այսուհետ՝ Մասնակից):

10.04.2023թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակցի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող, քանի որ վերջինս չէր ներկայացրել 06.04.2023թ. նիստով արձանագրված անհամապատասխանությունների շտկումները:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և ընթացակարգի հրավերի 8.10 կետերի պահանջները՝ եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար, հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, որոշում եմ՝ «Պլանետ Ֆայբեր» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ